9· ի սՐ Սարգիս յիշատակ ինձ եւ ծն
10· ողաց իմոց· վասն որոյ հայրս Յովհա
11· նէս եւ վարդապետս եւ այլ միաբա
12· նքս հաստատեցին զԴաւթի եւ զ
13· Յակոբա զՊաւղոսս եւ զՊէտրոս
14· սի եւ զսՐ Շողակոթին զպատարա
15· գն յամենայն ամի, որ լինի յամ
16· ենայն էկեղեցիքս, ինձ առնել ան
17· խափան· էթէ ոք հակառակի ի հար
18· անց եւ կամ ի պատրոնաց եւ զի
19· մ զյիշատակս խափանէ, որչափ
20· ա՞ծ աւրհնած է, այնչափ այն մարդն
21· անիծեալ է (գարնէզի վրայ)։

Զորրորդ տողի մէջ «զպայծառութի» բառի ռաւ վանկի վերջին տառը միացած է բ-ի հետ։ Ութերորդ տողում «զըզկէսն» բառի մէջ ՊՐ միասին է գրած և գրչի սխալի արդիւնք է. նա կամեցել է «ըզ» գրել, բայց կրկին աւելացրել է զ նախդիրը։ Տասն և հինգերորդ տողի մէջ որ յարաբերականը միացած է։ Տասնիններորդ տողում «որչափ» բառի մէջ որ վանկը միացած է։

24. Ծաղկագիր Անիի թանգարանում, պրոփ. Մառի պեղումներից. Ս. Գրիգորի բեմի ճակատի ծաղկագիր արձանագրութեան մի բեկոր, ԺԳ. դարից։ Երկար 70 սմ. մեր նկարը 15,2 սմ.։

Գրուած է. թէ քաղաքիս Անո տ՞ր Սարգ

25. Ծաղկագիր Ամաղուի (Վայոց ձորում) Բուրթելաշէն երկյարկանի եկեղեցու արևելեան պատին. քարի վրայ իւր տեսակի գրչութեան ամենագեղեցիկ օրինակներից մէկը։ Բուրթէլը Ստեփանոս Օրբէլեանի եղբօր՝ Էլիկումի որդին էր, որ իշխում էր հայրենի գաւառներին իւր եղբօր Բուղտայի հետ ԺԴ. դարու սկզբին։

Գրուած է. Բուրթէլ իշխանաց իշխան

26. Ոմն Սարգսի տափակ գերեզմանաքարի արձանագրութիւնը կեչառուաց վանքի բակում, 1355 թուից, որոշ տառերը շեղագրի ձևերով։ Մենք տեսել ենք Մաստարայում այսպիսի գրերով աւելի հին արձանագրութիւն ԺԳ. դարում, դարձեալ գերեզմանաքար։ Լուսանկարուած է հusամբաժից։